




### Էներգաարդյունավետության սանդղակ:

Համաձայն Եվրամիության Էներգետիկայի և տրանսպորտի հանձնաժողովի դիրեկտիվների՝ կենցաղային սպրանքների մեծ մասը, սկսած լուսավորման լամպերից, վերջացրած ավտոմեքենաներով, պետք է ունենան Էներգաարդյունավետության դասը ցուցադրող պիտակ: Օրինակ, լվացքի մեքենայի Էներգաարդյունավետության սանդղակը պարկերված է նկ. 17-ում: Տվյալ դեպքում սպրանքը համապատասխանում է A+ դասին և փարեկան ծախսում է 173 կՎտժ Էլեկտրաէներգիա: Սարքի Էներգաարդյունավետության դասերը նշվում են համապատասխանաբար G-ից մինչև A րտաերով: Առավել Էներգաարդյունավետ սարքերը A դասի սարքերն են, որոնք իրենց հերթին բաժանվում են A, A+, A++, A+++ դասերի: E, F և G դասի սարքերը աստիճանաբար դուրս են մղվում շուկայից:

Նկ. 18-ում բերված են Էներգաարդյունավետության փարքեր դասերի հարաբերակցությունները: Օրինակ, եթե D դասի սարքը որոշակի գործողության համար ծախսում է ինչ-որ քանակի Էներգիա, ապա A++ դասի նույնապիս սարքը այդ նույն գործողության համար կծախսի դրա 22 – 30 %-ը:



Նկ. Լվացքի մեքենայի Էներգաարդյունավետության դասը

Դասը	Հարաբերակցությունը
D	100 %
C	75 – 95 %
B	55 75 %
A	42 – 55 %
A+	30 – 42 %
A++	22 – 30 %
A+++	< 22 %

Նկ. Էներգաարդյունավետության դասերի հարաբերակցությունները